

**ԿԱՐԵՆ ԴԵՄԻՐՃՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՄԱՐԶԱՀԱՄԵՐԳԱՅԻՆ ՀԱՄԱԼԻՐԻ  
ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՅՄԱՆ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ  
ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N Վ22-02-2020**

ք. Երևան

05 մարտի 2020 թ.

Հայաստանի Հանրապետության անունից հանդես եկող՝ Պետական գույքի կառավարման կոմիտեն (այսուհետ՝ «Նվիրատու»), ի դեմս Նվիրատուի կանոնադրության հիման վրա գործող գլխավոր քարտուղարի պարտականությունները ժամանակավորապես կատարող Մ. Ղուշյանի, մի կողմից և «Կարեն Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիր» պետական ոչ առևտրային կազմակերպությունը (այսուհետ՝ «Նվիրառու»), ի դեմս կանոնադրության հիման վրա գործող տնօրեն Կարեն Ղազարյանի, մյուս կողմից (երկուսը միասին այսուհետ՝ «Կողմեր»), կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

**1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ**

1.1 Ի կատարումն Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի փետրվարի 13-ի «Հայաստանի Հանրապետության 2020 թվականի պետական բյուջեում վերաբաշխում, Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի դեկտեմբերի 26-ի N 1919-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու, Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության պետական գույքի կառավարման կոմիտեին գումար հատկացնելու և գնման գործընթացը սահմանելու մասին» N 170-Ն որոշման (այսուհետ՝ «Որոշում») պահանջների, Հայաստանի Հանրապետության 2020 թվականի պետական բյուջեի 08 բաժնի 02 խմբի 05 դասի 1168 Ծրագրի «Կարեն Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիրի կարողությունների զարգացում» 32006 դասիչով միջոցառման շրջանակներում «Կարեն Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիր» ՊՈԱԿ-ի կարողությունների զարգացման (այսուհետ՝ «Միջոցառում»)

նպատակով, Նվիրատուն սեփականության իրավունքով Նվիրառուին անհատույց հատկացնում է 718 489 300 (յոթ հարյուր տասնութ միլիոն չորս հարյուր ութսունինը հազար երեք հարյուր) ՀՀ դրամ գումարի չափով դրամաշնորհ (ներառյալ ԱԱՀ-ն)՝ սույն պայմանագրի N 3 հավելվածով («Վճարման ժամանակացույց») սահմանված ժամկետներում:

**1.2** Միջոցառումն իրականացվելու է սույն պայմանագրի N 1 հավելվածի («Տեխնիկական բնութագիր») պահանջներին և N4 հավելվածի ծախսային նախահաշվին համապատասխան:

## **2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

**2.1** Նվիրատուն իրավունք ունի՝

**2.1.1** ցանկացած ժամանակ ստուգել Նվիրառուի կողմից Միջոցառման իրականացման ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Նվիրառուի գործունեությանը,

**2.1.2** չընդունել Միջոցառման արդյունքները՝ սույն պայմանագրի N 1 հավելվածով («Տեխնիկական բնութագիր») կամ այդ Միջոցառման իրականացման համար Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված պահանջներին դրանք չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անվճար վերացման ողջամիտ ժամկետ և Նվիրառուից պահանջելով վճարել սույն պայմանագրի 4-րդ կետով նախատեսված տուգանքը:

**2.2** Նվիրատուն պարտավոր է՝

**2.2.1.** կատարել Միջոցառման իրականացման մոնիթորինգ՝ անհրաժեշտության դեպքում համագործակցելով այլ պետական կառավարման մարմինների հետ,

**2.2.2** ընդունել սույն պայմանագրի N 1 հավելվածի («Տեխնիկական բնութագիր») պահանջներին համապատասխան իրականացված Միջոցառման արդյունքները՝ համաձայն Նվիրառուի կողմից ներկայացված Միջոցառման արդյունքների հանձնման-ընդունման արձանագրության (հավելված N2), իսկ դրանցում թերություններ հայտնաբերելու դեպքում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Նվիրառուին,

**2.2.3** Միջոցառման իրականացման համար Նվիրառուին վճարել սույն պայմանագրով սահմանված գումարը՝ համաձայն N 3 հավելվածի (վճարման ժամանակացույց):



### 2.3 Նվիրառուն իրավունք ունի՝

2.3.1 Ստանալ Նվիրատուի կողմից վճարված՝ Պայմանագրով սահմանված Նվիրառուին հասանելիք գումարները,

2.3.2 Նվիրատուի կողմից գումարները չվճարվելու դեպքում միակողմանի լուծելու սույն պայմանագիրը և պահանջելու հատուցել Նվիրառուին պատճառված վնասները:

### 2.4 Նվիրառուն պարտավոր է՝

2.4.1 իրականացնել Նվիրատուի կողմից տրամադրված գումարների հաշվառում՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ հանրային հատվածի կազմակերպությունների համար սահմանված հաշվապահական հաշվառման ստանդարտին համապատասխան,

2.4.2 սույն պայմանագրով հատկացված ֆինանսական միջոցներն օգտագործել սույն պայմանագրով սահմանված նպատակներով ու չափաքանակներով: Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի դեկտեմբերի 26-ի «Հայաստանի Հանրապետության 2020 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» N 1919-Ն որոշման 4-րդ կետի 13-րդ ենթակետի՝ Միջոցառման տարեկան արդյունքները Նվիրատուի կողմից ընդունվելուց հետո Նվիրառուն Միջոցառման իրականացման արդյունքում առաջացած տնտեսումները (խնայողությունները) վերադարձնում է Հայաստանի Հանրապետության պետական բյուջե՝ ոչ ուշ, քան մինչև 2020թ.-ի դեկտեմբերի 25-ը, իսկ համաձայն «Հայաստանի Հանրապետության 2020 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածի 22-րդ մասի՝ Դրամաշնորհի նկատմամբ հաշվարկված ԱԱՀ-ի գծով լրացուցիչ հատկացումները չեն կարող ուղղվել այլ նպատակների, իսկ ԱԱՀ-ի վճարման համար նախատեսված հատկացումների գծով չօգտագործված գումարները 2020 թվականի ընթացքում ենթակա են վերադարձման Հայաստանի Հանրապետության պետական բյուջե,

2.4.3 ապահովել Աշխատանքներում առկա թերությունների վերացման նպատակով Նվիրատուի կողմից տրված ցուցումների կատարումը,

2.4.4 սույն պայմանագրով սահմանված կարգով Նվիրատուին ներկայացնել Աշխատանք-

ների կատարման մասին հաշվետվություններ, իսկ Միջոցառման ավարտից հետո՝ ամփոփ հաշվետվություն,

**2.4.5** սույն պայմանագրի գործողության ընթացքում ապահովել Ծրագրի իրականացմանը վերաբերող փաստաթղթերին ծանոթանալու Նվիրատուի հնարավորությունը՝ վերջինիս կողմից գրավոր պահանջ ներկայացնելու օրվանից 5 աշխատանքային օրվա ընթացքում.

**2.4.6** Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ ապրանքները, աշխատանքները և ծառայությունները ձեռք բերել «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով՝ պետության կարիքների համար կատարվող գնումների կանոններին համապատասխան:

### **3. ՄԻՋՈՑԱՌՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ**

**3.1** Յուրաքանչյուր եռամսյակի ավարտից ոչ ուշ՝ քան 3 աշխատանքային օրվա ընթացքում Նվիրատուն Նվիրատուին է ներկայացնում տվյալ եռամսյակի ընթացքում իր կողմից Միջոցառման շրջանակներում կատարված աշխատանքների վերաբերյալ ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության երկու օրինակը (հավելված N2):

**3.2** Նվիրատուն հանձնման-ընդունման արձանագրության օրինակները ստանալու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում, կնքում և Նվիրատուին է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ նրան է ներկայացնում Աշխատանքները կամ դրանց որևէ մասը չընդունելու պատճառաբանված գրավոր մերժում՝ մատնանշելով անհամապատասխանությունները և սահմանելով Աշխատանքների կամ դրանց որևէ մասի վերստին կատարման ողջամիտ ժամկետ:

**3.3** Կատարված Աշխատանքները կամ դրանց որևէ մասը համարվում է Նվիրատուի կողմից ընդունված, եթե դրա հանձնման-ընդունման արձանագրությունը Նվիրատուից ստանալու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Նվիրատուն չի կատարում սույն պայմանագրի 3.2 կետով նախատեսված գործողություններից որևէ մեկը:

### **4. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ**



Սույն պայմանագրով և Միջոցառմամբ նախատեսված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքում Նվիրատուն պարտավորվում է Նվիրատուին փոխհատուցել Աշխատանքների չկատարված մասի չափով և վճարել տուգանք՝ Աշխատանքների չկատարված մասի համար նախատեսված գումարի 1 տոկոսի չափով: Ընդ որում, տուգանքի վճարումը Նվիրատուին չի ազատում իր պարտավորությունները կատարելու և խախտումները վերացնելու պարտականությունից:

## **5. ՄՈՆԻԹՈՐԻՆԳԸ**

**5.1** Նվիրատուն Միջոցառման իրականացման նախնական, ընթացիկ և վերջնական արդյունքների համապատասխանության գնահատման նպատակով իրականացնում է մոնիթորինգ:

**5.2** Մոնիթորինգն իրականացվում է Նվիրատուի և (կամ) նրա կողմից լիազորված անձի կողմից:

**5.3** Մոնիթորինգի իրականացման ընթացքում բացահայտված թերացումների ու բացթողումների շտկման նպատակով Նվիրատուին տրվում են ցուցումներ, և կատարվում են առաջարկություններ:

**5.4** Նվիրատուն ցանկացած ժամանակ կարող է Միջոցառման շրջանակներում իրականացնել մոնիթորինգ՝ ուսումնասիրելով Միջոցառմանն առնչվող ցանկացած փաստաթղթեր և նյութեր:

**5.5** Մոնիթորինգի իրականացման ընթացքում Նվիրատուից կարող են պահանջվել գրավոր ու բանավոր պարզաբանումներ և բացատրություններ:

## **6. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ**

Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև 2020 թվականի դեկտեմբերի 25-ը:

## **7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)**

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար Կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է այնպիսի արտակարգ ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը Կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Նման իրավիճակներ են հանդիսանում մասնավորապես՝ երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, զանգվածային հասարակական անկարգությունները, գործադուլները, հաղորդակցության համակարգերի աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով Կողմերի պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունն անընդմեջ շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա Կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով լուծել սույն պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս Կողմին:

## **8. ԵԶՐԱՓՈՒԿ ԴՐՈՒՅԹՆԵՐ**

8.1 Սույն պայմանագրից ծագած Կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց Կողմերի գրավոր (ստորագրված ու կնքված) երկկողմ համաձայնության:

8.2 Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի գրավոր (ստորագրված ու կնքված) երկկողմ համաձայնություններով:

8.3 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.4 Սույն պայմանագիրը բաղկացած է \_\_\_ էջից և \_\_ էջ հավելվածներից, կազմված է երկու հավասարազոր օրինակներից՝ յուրաքանչյուր Կողմին մեկական օրինակ:


## **9. ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿՈՂՄԵՐԻ ՄԱՍԻՆ**

Նվիրատու՝ Հայաստանի Հանրապետության անունից հանդես եկող՝ Պետական գույքի

կառավարման կոմիտե, ՀՎՀՀ 02528489, հասցե՝ ք. Երևան, Տիգրան Մեծի 4, ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի գործառնական վարչություն h/h 900011033561:


Նվիրառու՝ «Կարեն Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիր» ՊՈԱԿ, ՀՎՀՀ 00144572, հասցե՝ ք. Երևան, Ծիծեռնակաբերդի զբոսայգի 1, ՀՀ ֆինանսների, նախարարության աշխատակազմի գործառնական վարչություն h/h 900018002825:

Նվիրառու՝



Մ. Ղուշյան

Նվիրառու՝



Կ. Ղազարյան

Կ. Տ.



**Հավելված N 1**

Կարեն Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիրի կարողությունների զարգացման դրամաշնորհի 2020թ.-ի մարտի \_\_\_\_ -ի թիվ 422-02-2020 պայմանագրի

**ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ**

Կարեն Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիրին» լուսադիողային լուսատուներ, սահադաշտի վերազինման համար սառնարանային սարքերի կոմպրեսորներ ու սարքավորումներ, երաժշտական գործիք (ռոյալ), ձայնային սարքավորումներ, լուսային սարքեր և էլեկտրական լամպեր ձեռքբերելու նպատակով Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի փետրվարի 13-ի թիվ 170-Ն որոշման համաձայն վերաբերելի պահանջների կատարում:

	անվանումը և ապրանքային նշանը**	տեխնիկական բնութագիրը*	չափման միավորը	քանակը	մատակարարման	
					հասցեն	Ժամկետը**
<b>1. Սահադաշտի վերազինման համար սառնարանային սարքերի կոմպրեսորներ ու սարքավորումներ</b>						
1	Սառնարանային սարքերի ճնշակներ (կոմպրեսորներ)	Կոմպրեսոր գերմանական արտադրության Bitzer «կամ համարժեքը», սերիա CSH 8573-140Y Բաղկացուցիչ մասերով՝ Կոմպրեսորների, Diksel կարգավարների հետ ընդլայնման փականներ Ընդունիչ կայան 100 լիտր Խողովակների և տեղադրման նյութերի հավաքածու: էլեկտրական մալուխների պնակներ: Պոմպակայան Willo «կամ համարժեքը» - դարպասի փականներ; - հետադարձ փականները; - կոլեկտոր (ներծծում և արտանետում) - ընդարձակման բաք; - էլեկտրական պահարան; - շրջանակ	հատ	3	Ք. Երևան Ծիծեռնակաբերդի զբոսայգի 1	01.12.2020
2	Յուղահովացուցիչ	Յուղի Հովացուցիչ	հատ	3	Ք. Երևան Ծիծեռնակաբերդի զբոսայգի 1	01.12.2020



3	Ջերմափոխան ակման սարքավորումներ, օդորակման և սառնարանային սարքեր և գտիչ ֆիլտրող մեքենաներ	Լրացուցիչ յուղի տարանջատիչ	հատ	3	Ք. Երևան Ծիծեռնակաբերդի զբոսայգի 1	01.12.2020
4	Փականներ՝ ըստ գործառնությունների	E4V85 st100 էլեկտրոնային ընդարձակման փական EVD էլոլյուցիոն շարժիչով (էլեկտրական փական + ընդարձակման փական):	հատ	3	Ք. Երևան Ծիծեռնակաբերդի զբոսայգի 1	01.12.2020
5	Ջերմափոխան ակման սարքեր	Ջերմափոխանակիչ թիթեղաձև SWEP	հատ	3	Ք. Երևան Ծիծեռնակաբերդի զբոսայգի 1	01.12.2020
6	Գազի հովացման համակարգեր	ECO կոնդենսատոր TD1 = 10K, հաշվարկված կոնդենսացիոն ջերմաստիճան + 490C; օդի դրսի ջերմաստիճան + 390C, օդի կոնդենսատորի օդափոխիչների համար վերահսկիչ պահարան	հատ	3	Ք. Երևան Ծիծեռնակաբերդի զբոսայգի 1	01.12.2020
7	Հսկողության փականներ	Անջատիչ և կառավարման փականներ - Դանֆոս (Դանիա).- Կոմպրեսորի ներծծման և բեռնաթափման անջատված փականը - Յուղի տարանջատիչ, անջատիչ փական յուղի տարանջատիչի վրա, յուղի ֆիլտրով, նավթի գծի վրա ստուգվող փական, սոլենոիդ- ICS փորձնական փական CVP շարժիչով բեռնաթափման գծում - Անցակետային գծի վրա ստացողի վրա դիֆերենցիալ փականներ - անջատիչ փական, կոնդենսատորի դիմաց լիքքաթափման վրա. - անջատիչ փականը կոնդենսատորից հետո հեղուկ գծի վրա - Հետադարձ փական հեղուկ գծի - Ռոտոլոկ փականներ ուժեղացուցիչի վրա: - Հեղուկ ֆիլտր ուժեղացուցիչից հետո- Տեսարան ապակի - խոնավության ցուցիչ - անջատիչ փական հեղուկ գծի վրա դեպի տնտեսացուցիչ- - մեխանիկական ընդլայնման փական- - Սոլենոիդ փական և էլեկտրոնային ընդլայնման փական հեղուկ գծում գոլորշիացնելուց առաջ:	հատ	3	Ք. Երևան Ծիծեռնակաբերդի զբոսայգի 1	01.12.2020
<b>2. Լուսադիոդային լուսատուներ</b>						
1	Լուսարձակ	Լուսարձակ՝ Հզորություն՝ 80±5 Վտ Լուսային հոսք՝ 12100±100 լյումեն Արդյունավետություն՝ 143 լյումեն/Վտ Հզորության գործակից՝ ≥0.95 CRI ≥80 CCT: 4000 50 000 h (L80B10) at Ta = 25 °C Լույսի Քաշխման Կոր՝ ըստ նկարի Իրանի գույնը RAL9006, Նշում՝ Երաշխիք՝ 5 տարի	հատ	3	Ք. Երևան Ծիծեռնակաբերդի զբոսայգի 1	01.12.2020
2	Լուսարձակ	Լուսարձակ՝ Հզորություն՝ 350±10 Վտ Լուսային հոսք՝ 44200±200 լյումեն Արդյունավետություն՝ ≥120 լյումեն/Վտ Հզորության գործակից՝ ≥0.95 CRI: ≥80	հատ	80	Ք. Երևան Ծիծեռնակաբերդի զբոսայգի 1	01.12.2020

		CCT: 4000 50 000 h (L80B10) at Ta = 25 °C Լույսի Բաշխման Կոր՝ ըստ նկարի Իրանի գույնը RAL9006				
3	Լուսատու մակերեսի վրա տեղադրվող, կլոր	Լուսատու մակերեսի վրա տեղադրվող, կլոր, տրամագիծը մինչև 350 մմ՝ Հզորություն՝ 12±2 Վտ Լուսային հոսք՝ 1000±50 լյումեն Արդյունավետություն՝ ≥80 լյումեն/Վտ Հզորության գործակից՝ ≥0.95 CRI: ≥80 CCT: 3000 50 000 h (L80B10) at Ta = 25 °C Լույսի Բաշխման Կոր՝	հատ	144	Ք. Երևան Ծիծեռնակաբերդի գրոսայգի 1	01.12.2020
4	Լուսատու մակերեսի վրա տեղադրվող, կլոր	Լուսատու մակերեսի վրա տեղադրվող, կլոր, տրամագիծը մինչև 350 մմ՝ Հզորություն՝ 25±5 Վտ Լուսային հոսք՝ 1700±100 լյումեն Արդյունավետություն՝ ≥80 լյումեն/Վտ Հզորության գործակից՝ ≥0.95 CRI: ≥80 CCT: 3000 50 000 h (L80B10) at Ta = 25 °C Լույսի Բաշխման Կոր	հատ	198	Ք. Երևան Ծիծեռնակաբերդի գրոսայգի 1	01.12.2020
5	Լուսատու մակերեսի վրա տեղադրվող, գծային	Լուսատու մակերեսի վրա տեղադրվող, գծային՝ Հզորություն՝ 25±5 Վտ Լուսային հոսք՝ 1700±100 լյումեն Արդյունավետություն՝ ≥80 լյումեն/Վտ Հզորության գործակից՝ ≥0.95 CRI: ≥80 CCT: 3000 50 000 h (L80B10) at Ta = 25 °C Լույսի Բաշխման Կոր	հատ	3	Ք. Երևան Ծիծեռնակաբերդի գրոսայգի 1	01.12.2020
6	Լուսատու տեղադրվող ուղղորդիչի վրա	Լուսատու տեղադրվող ուղղորդիչի վրա՝ Հզորություն՝ 25±5 Վտ Լուսային հոսք՝ 2100±100 լյումեն Արդյունավետություն՝ ≥100 լյումեն/Վտ Հզորության գործակից՝ ≥0.95 CRI: ≥80 CCT: 3000 50 000 h (L80B10) at Ta = 25 °C Լույսի Բաշխման Կոր	հատ	32	Ք. Երևան Ծիծեռնակաբերդի գրոսայգի 1	01.12.2020
7	Լուսատու մակերեսի վրա տեղադրվող, գծային	Լուսատու մակերեսի վրա տեղադրվող, գծային՝ Հզորություն՝ 35±5 Վտ Լուսային հոսք՝ 4400±100 լյումեն Արդյունավետություն՝ ≥125 լյումեն/Վտ Հզորության գործակից՝ ≥0.95 CRI: ≥80 CCT: 3000 50 000 h (L80B10) at Ta = 25 °C Լույսի Բաշխման Կոր	հատ	25	Ք. Երևան Ծիծեռնակաբերդի գրոսայգի 1	01.12.2020
8	Լուսատու մակերեսի վրա տեղադրվող, գծային	Լուսատու մակերեսի վրա տեղադրվող, գծային՝ Հզորություն՝ 50±5 Վտ Լուսային հոսք՝ 6000±100 լյումեն Արդյունավետություն՝ ≥125 լյումեն/Վտ Հզորության գործակից՝ ≥0.95 CRI: ≥80 CCT: 3000 50 000 h (L80B10) at Ta = 25 °C Լույսի Բաշխման Կոր	հատ	4	Ք. Երևան Ծիծեռնակաբերդի գրոսայգի 1	01.12.2020
9	Լուսատու մակերեսի վրա տեղադրվող,	Լուսատու մակերեսի վրա տեղադրվող, գծային՝ Հզորություն՝ 40±5 Վտ Լուսային հոսք՝ 4300±100 լյումեն	հատ	22	Ք. Երևան Ծիծեռնակաբերդի գրոսայգի 1	01.12.2020



	զծային	Արդյունավետություն՝ $\geq 110$ լյումեն/Վտ Հզորության գործակից՝ $\geq 0.95$ CRI: $\geq 80$ CCT: 3000 50 000 h (L80B10) at Ta = 25 °C Լույսի Բաշխման Կոր				
10	Լուսատու մակերեսի վրա տեղադրվող, զծային	Լուսատու մակերեսի վրա տեղադրվող, զծային՝ Հզորություն՝ $20 \pm 5$ Վտ Լուսային հոսք՝ $2100 \pm 50$ լյումեն Արդյունավետություն՝ $\geq 110$ լյումեն/Վտ Հզորության գործակից՝ $\geq 0.95$ CRI: $\geq 80$ CCT: 3000 50 000 h (L80B10) at Ta = 25 °C Լույսի Բաշխման Կոր՝ IP 65	հատ	9	Ք. Երևան Ծիծեռնակաբերդի գրասայգի 1	01.12.2020
11	Լուսատու մակերեսի վրա տեղադրվող, պանել	Լուսատու մակերեսի վրա տեղադրվող, պանել՝ $60 \times 60$ սմ: Հզորություն՝ $30 \pm 5$ Վտ Լուսային հոսք՝ $2500 \pm 50$ լյումեն Արդյունավետություն՝ $\geq 95$ լյումեն/Վտ Հզորության գործակից՝ $\geq 0.95$ CRI: $\geq 80$ CCT: 3000 50 000 h (L80B10) at Ta = 25 °C Լույսի Բաշխման Կոր	հատ	23	Ք. Երևան Ծիծեռնակաբերդի գրասայգի 1	01.12.2020
12	Լուսատու կախովի, կլոր	Լուսատու կախովի, կլոր՝ Հզորություն՝ $65 \pm 5$ Վտ Լուսային հոսք՝ $7800 \pm 100$ լյումեն Արդյունավետություն՝ $\geq 120$ լյումեն/Վտ Հզորության գործակից՝ $\geq 0.95$ CRI: $\geq 80$ CCT: 3000 50 000 h (L80B10) at Ta = 25 °C Լույսի Բաշխման Կոր	հատ	42	Ք. Երևան Ծիծեռնակաբերդի գրասայգի 1	01.12.2020
13	Լուսատու ներկառուցվող, կլոր "downlight"	Լուսատու ներկառուցվող, կլոր "downlight" Հզորություն՝ $15 \pm 3$ Վտ Լուսային հոսք՝ $1100 \pm 100$ լյումեն Արդյունավետություն՝ $\geq 75$ լյումեն/Վտ Հզորության գործակից՝ $\geq 0.95$ CRI: $\geq 80$ CCT: 3000 50 000 h (L80B10) at Ta = 25 °C Լույսի Բաշխման Կոր Ներկառուցման տրամագիծը՝ 180 մմ	հատ	1068	Ք. Երևան Ծիծեռնակաբերդի գրասայգի 1	01.12.2020
14	Լուսատու ներկառուցվող, կլոր "downlight"	Լուսատու ներկառուցվող, կլոր "downlight" Հզորություն՝ $25 \pm 3$ Վտ Լուսային հոսք՝ $1900 \pm 100$ լյումեն Արդյունավետություն՝ $\geq 75$ լյումեն/Վտ Հզորության գործակից՝ $\geq 0.95$ CRI: $\geq 80$ CCT: 3000 50 000 h (L80B10) at Ta = 25 °C Լույսի Բաշխման Կոր Ներկառուցման տրամագիծը՝ 180 մմ	հատ	243	Ք. Երևան Ծիծեռնակաբերդի գրասայգի 1	01.12.2020
15	Լուսատու ներկառուցվող, կլոր "downlight"	Լուսատու ներկառուցվող, կլոր "downlight" Հզորություն՝ $45 \pm 5$ Վտ Լուսային հոսք՝ $2850 \pm 100$ լյումեն Արդյունավետություն՝ $\geq 70$ լյումեն/Վտ Հզորության գործակից՝ $\geq 0.95$ CRI: $\geq 80$ CCT: 3000 50 000 h (L80B10) at Ta = 25 °C	հատ	22	Ք. Երևան Ծիծեռնակաբերդի գրասայգի 1	01.12.2020

		Լույսի Բաշխման Կոր Ներկառուցման տրամագիծը՝ 180 մմ				
16	Լուսատու ներկառուցվող, կլոր "downlight"	Լուսատու ներկառուցվող, կլոր "downlight"՝ Հզորություն՝ 10±2 Վտ Լուսային հոսք՝ 800±50 լյումեն Արդյունավետություն՝ ≥90 լյումեն/Վտ Հզորության գործակից՝ ≥0.95 CRI: ≥80 CCT: 3000 50 000 h (L80B10) at Ta = 25 °C Լույսի Բաշխման Կոր Ներկառուցման տրամագիծը՝ 75մմ	հատ	334	Ք. Երևան Ծիծեռնակաբերդի գրոսայգի 1	01.12.2020
17	Լուսատու փողոցային	Լուսատու փողոցային՝ Հզորություն՝ 30±3 Վտ Լուսային հոսք՝ 3400±150 լյումեն Արդյունավետություն՝ ≥120 լյումեն/Վտ Հզորության գործակից՝ ≥0.95 CRI: ≥70 CCT: 3000 50 000 h (L80B10) at Ta = 25 °C Լույսի Բաշխման Կոր՝ ըստ նկարի Իրանի գույնը՝ RAL9006 IP 65 IK 08 Միջավայրի ջերմաստիճան՝ -30-ից +50-ն °C	հատ	30	Ք. Երևան Ծիծեռնակաբերդի գրոսայգի 1	01.12.2020
18	Լուսատու փողոցային	Լուսատու փողոցային՝ Հզորություն՝ 40±3 Վտ Լուսային հոսք՝ 5200±150 լյումեն Արդյունավետություն՝ ≥120 լյումեն/Վտ Հզորության գործակից՝ ≥0.95 CRI: ≥70 CCT: 3000 50 000 h (L80B10) at Ta = 25 °C Լույսի Բաշխման Կոր՝ ըստ նկարի Իրանի գույնը՝ RAL9006 IP 65 IK 08 Միջավայրի ջերմաստիճան՝ -30-ից +50-ն °C	հատ	44	Ք. Երևան Ծիծեռնակաբերդի գրոսայգի 1	01.12.2020
19	Լուսավորման սարքավորման հավաքածու	Լուսավորման սարքավորման հավաքածու կազմված՝ Կարգավորվող հոսանքի աղբյուր մինչև 24 հատ 8Վտ իզոլացիայի մոդուլ միացնելու հնարավորությունով Հզորություն՝ 200-50/+10 Վտ Ելքային լարում՝ 220-ից 240 Վ Ղեկավարման արձանագրություն՝ DALI Հզորության գործակից՝ ≥0.95  Լուսադիոդային մոդուլ՝ Չափեր՝ 120x120մմ, լուսադիոդների տեղաբաշխումը՝ ըստ զծագրի Հզորություն՝ 7±1 Վտ Մոդուլների աշխատանքային հոսանք՝ 700 մԱ Լուսային հոսք՝ 650±10 լյումեն Արդյունավետություն՝ ≥90 լյումեն/Վտ CRI: ≥80 CCT: 4000 50 000 h (L80B10) at Ta = 25 °C Լույսի Բաշխման Կոր՝ ըստ նկարի	հավաքածու	20	Ք. Երևան Ծիծեռնակաբերդի գրոսայգի 1	01.12.2020



		<p>Մոդուլը պետք է ունենա լարերի հեշտ միացման կետ և հնարավորություն մինչև 24 մոդուլ հաջորդաբար միացնելու հնարավորություն</p> <p>Ամրացման շրջանակ՝ համաձայն գծագրի (հավելված 1)</p> <p>Մոդուլների միացման լարեր՝          Մակնիշ՝ H05RN-F 1,5          Երկարություն՝ 50 սմ          Լարերի ծայրերը կլայելված կամ պաշտպանված ծայրակալներով          Աշխատանքային լարում՝ մինչև 500Վ          Աշխատանքային հոսանք՝ մինչև 2Ա          Յուրաքանչյուր հավաքածուն ներառում է՝</p> <p>Հոսանքի աղբյուր՝ 1 հատ;</p> <p>Լուսադիոդային մոդուլ՝ 24 հատ;</p> <p>Ամրացման շրջանակ՝ 24 հատ;</p> <p>Միացման լար մոդուլների միացման համար՝ 24 հատ</p>			
--	--	--	--	--	--

### 3. Ձայնային սարքավորումներ

1	Ձայնային սարքավորումներ	<p>Քարծրախոսներ (Adamson systems)՝ 10 մոդելի նախատեսված ընդհանուր ձայնադրման համար բարձր և միջին հաճախականությունների:</p> <p>1. Հաճախականության տիրույթ (+/-3 db ձայնի շեղումով) 60 Hz-18kHz</p> <p>2. Ծածկույթ ամբողջ հաճախականությունների տիրույթով կազմում է հորիզոնական 110 աստիճան, ուղղահայաց 10 աստիճան</p> <p>3. Մաքսիմալ ձայնային ճնշումը 141.3 db A տեսակի չափման տիրույթում համապատասխան ուժեղացուցիչների առկայության դեպքում:</p> <p>4. Քարծրախոսի կառուցվածքը          Իրանում ներկառուցված են թվով երեք քարծրախոս, որից երկուսը 10" դույմ չափով բաղկացած neodyum գլխիկներից և Kevlar տեսակի թղթից: Իսկ մյուսը բաղկացած է տիտանե շափիկից, որի չափսերը 4" դույմ է, իսկ ելքային չափերը 1.5" դույմ:</p> <p>5. Քարծրախոսների դիմադրություն          Միջին և ցածր հաճախականության քարծրախոսների դիմադրությունը 16 օրն է, իսկ բարձր հաճախականության քարծրախոսինը 8 օրն : Ընդհանուր դիմադրությունը 8 օրն:</p> <p>6. Հզորություն          Նոմինալ հզորությունը միջին և ցածր հաճախականության քարծրախոսների մոտ 350 վատ յուրաքանչյուրը: Աշխատանքային հզորությունը 700 վատ մաքսիմալ հզորությունը 1400 վատ:          Նոմինալ հզորությունը բարձր հաճախականության քարծրախոսի մոտ կազմում է 160 վատ, աշխատանքային 320 վատ մաքսիմալ 640 վատ:</p> <p>7. Քարծրախոսների չափսերը, ծանրությունը, կցորդիչները, կախելու համար նախատեսված դետալները:          Ուղղահայաց կարելի է կախել 16 քարծրախոս: Կախման անկյունները՝ 0-8 աստիճան, առանց հաշվի առնելու հարակից ուղղահայաց անկյունաբաշխիչը:</p> <p>8. Չափսերը՝          Լայնքը՝ 737 մմ          Խորությունը՝ 526 մմ          Հետնամասի բարձրությունը՝ 178 մմ          Դիմային հատվածի բարձրությունը՝ 265 մմ          Քաշը՝ 27 կգ          Միացուցիչներ          Տեսակը՝ Neutrick SpeakON NL-8 2x          9. Կառավարում          Կառավարումը կարգավորվում է LAKE համակարգով</p>	հատ	22	Ք. Երևան, Ծիծեռնակաբերդի գրոսայգի 1	01.12.2020
2	Ձայնային սարքավորումներ	<p>Քարծրախոսներ (Adamson systems)՝ 10 N մոդելի լրակազմով նախատեսված ընդհանուր ձայնադրման համար բարձր և միջին հաճախականությունների: Թվով 2 հատ քարծրախոս:</p> <p>1. Հաճախականության տիրույթ (+/-3db ձայնի շեղումով) 60Hz-18kHz</p> <p>2. Ծածկույթ ամբողջ հաճախականությունների տիրույթով կազմում է հորիզոնական 90 աստիճան, ուղղահայաց 10 աստիճան:</p> <p>3. Մաքսիմալ ձայնային ճնշումը 141.3 db A տեսակի չափման տիրույթում համապատասխան ուժեղացուցիչների առկայության դեպքում:</p> <p>4. Քարծրախոսի կառուցվածքը          Իրանում ներկառուցված են թվով երեք քարծրախոս, որից երկուսը 10" դույմ չափով բաղկացած neodyum գլխիկներից և Kevlar տեսակի թղթից: Իսկ մյուսը բաղկացած է տիտանե շափիկից, որի չափսերը 4" դույմ է, իսկ ելքային չափսերը 1.5" դույմ:</p>	հատ	2	Ք. Երևան, Ծիծեռնակաբերդի գրոսայգի 1	01.12.2020

		<p>5. Բարձրախոսների դիմադրություն Միջին և ցածր հաճախականության բարձրախոսների դիմադրություն 16 օհմ է, իսկ բարձր հաճախականության բարձրախոսինը 8 օհմ, ընդհանուր դիմադրությունը կազմում է 8 օհմ:</p> <p>6. Հզորություն Նոմինալ հզորությունը միջին և ցածր հաճախականության բարձրախոսների մոտ 350 վատ յուրաքանչյուրը, աշխատանքային հզորությունը 700 վատ մաքսիմալ հզորությունը 1400 վատ:</p> <p>Նոմինալ հզորությունը բարձր հաճախականության բարձրախոսի մոտ կազմում է 160 վատ, աշխատանքային 320 վատ, մաքսիմալ 640:</p> <p>7. Բարձրախոսներ չափսերը, ծանրությունը, կցորդիչները, կախելու համար նախատեսված դետալները: Ուղղահայաց 16 բարձրախոս: Կախման անկյունները 0-8 աստիճան առանց հաշվի առնելու հարակից ուղղահայաց անկյունաբաշխիչը: Չափսերը Լայնքը՝ 737 մմ Խորություն՝ 526 մմ Հետնամասի բարձրություն՝ 178 մմ Դիմային հատվածի բարձրություն՝ 265 մմ Քաշը՝ 27 կգ</p> <p>8. Միացուցիչներ Տեսակը՝ Neutrik Speak ON NL- 8 2x</p> <p>9. Կառավարում Կառավարումը կարգավորվում է LAKE համակարգով Բարձրախոսների տեղափոխման համար նախատեսված համակարգ 10 հատ ինչպես նաև անկյունային բաշխիչ համակարգ 2 հատ</p>				
3	Երաժշտական գործիքների մասեր և պարագաներ	Կախիչներ նախատեսված բարձրախոսների համար:	լրակազմ	2	Ք. Երևան, Ծիծեռնակաբերդի զբոսայգի 1	01.12.2020
4	Բարձրախոսներ	<p>1. Բարձրախոսներ (Adamson Systems) E 119 մոդելի իր համակարգային ուժեղացուցիչներով, բաժանարարներով և հոսանքի բաշխիչ համակարգով նախատեսված ընդհանուր ծայնադրման համար ցածր հաճախականությունների: Հաճախականության տիրույթ (+/- 3 ժժ ծայնի շեղումով) 30-իշ-100իշ</p> <p>2. Ծածկույթ ամրոցակա</p> <p>3. Մաքսիմալ ծայնային ճնշումը 138 ժժ A տեսակի չափման տիրույթում համապատասխան ուժեղացուցիչների առկայության դեպքում:</p> <p>4. Բարձրախոսի կառուցվածքը Իրանում ներկառուցված են թվով 1 բարձրախոս 19" դրոյմ չափով:</p> <p>5. Բարձրախոսների դիմադրություն 8 օհմ</p> <p>6. Հզորություն Նոմինալ հզորությունը 1600 Վտ Աշխատանքային հզորությունը 3200 Վտ, մաքսիմալ հզորությունը 7200 Վտ:</p> <p>7. Բարձրախոսների չափսերը, ծանրությունը, կցորդիչները, կախելու համար նախատեսված դետալները: Ուղղահայաց կարելի է կախել 12 բարձրախոս: Կախման անկյունները 0-4 աստիճան առանց հաշվի առնելու հարակից ուղղահայաց անկյունաբաշխիչը: Չափսերը՝ Լայնքը-749 մմ, Խորությունը- 889 մմ Բարձրությունը-572 մմ, Քաշը- 66.5 կգ.</p> <p>8. Միացուցիչներ Տեսակը Neutrik R Speak ON NL-4 (4x)</p> <p>9. Կառավարում Կառավարումը կարգավորվում է LAKE համակարգով, ինչպես նաև Բարձրախոսների համար նախատեսված ուժեղացուցիչներ իրենց համապատասխան հոսանքի համար, նախատեսված հարով, ինչպես նաև ծայնային անալոգ և թվային ազդանշանի համար նախատեսված բաշխիչով, որը կառավարվում է, ինչպես սովորական ցանցով, այնպես էլ Dante համակարգով իրենց պաշտպանիչ արկղով: Ուժեղացուցիչները թվով 6 հատ, որից 4-ը 12 կիլովատ հզորությամբ, իսկ 2-ը 20 կիլովատ հզորությամբ: Մալուխներ 8*4 մմ ռեզինապատ titanex տեսակի, նախատեսված բարձրախոսների համար 300 մ. Միացուցիչներ Neutrik NL 8 տեսակի 50 հատ Միացուցիչներ Neutrik NL 4 տեսակի 32 հատ:</p>	հատ	12	Ք. Երևան, Ծիծեռնակաբերդի զբոսայգի 1	01.12.2020
<b>4. Լուսային սարքավորումներ</b>						
1	Վոլֆրամե թելերով հայրգենային շիկացման լամպեր	<b>PAR36 650 W 120V DWE, GE Lighting</b> 650W/120V Durability 100h, With screw terminal Blinder lamp	հատ	50		01.12.2020
2	Լուսային սարքեր և էլեկտրական լամպեր	1200 Walt, Colour temp; 6000 K Brightness: 103000 lm Averagelife;appr. 750h.	հատ	24	Ք. Երևան Ծիծեռնակաբերդի զբոսայգի 1	01.12.2020



		MSR 1200/SA/DE Gold,  Philips				
3	Լուսավորման համակարգեր - <b>BEAM տեսակի</b>	<i>Լուսային սարքավորում – BEAM տեսակի</i> - (36 հատ) <i>FINE ART</i> <i>Լուսային սարքավորում – BEAM տեսակի</i> , Fine Art 380 BEAM Լամպի տեսակ- 17R Լուսային բացվածք- 4 աստիճան Լուսատվություն 200000 LUX 5 մետր տարածության վրա Շարժման համակարգի կետայնությունը- 16 bit Ղեկավարման հնարավորություն-DMX, Art Net Գույների քանակը- 14, Պատկերներով շրջանակների քանակը-1 հատ, 17 պատկեր Լուսի կափույրի բացվածքի կետայնությունը-16 Bit Պրիզմա 2 տեսակի վերադրվող պրիզմաներ պտտման հնարավորություններով: 560 Վտ 424 mmx 390mmx634mm 25.5 կգ IP 20 Սարքի հետ ներառված է համապատասխան կախիչներ, անվտանգության ճուպան, տեղափոխման համար նախատեսված արկղ (flight case), լուսային սարքին համապատասխանող անձնագիր: 2 տարվա երաշխիք տեղում + հետերաշխիքային սպասարկում և առանձին մասերի տրամադրում	հատ	36	Ք. Երևան Ծիծեռնակաբերդի զբոսայգի 1	01.12.2020
4	Լուսավորման համակարգեր - <b>LED WASH տեսակի</b>	<i>Լուսային սարքավորում – LED WASH տեսակի</i> - (24 հատ) <i>FINE ART</i> Լամպի տեսակ- 37*15W RGBW Osram LED Լուսային բացվածք- 9-50 աստիճան Լուսատվություն -5000 LUX 5 մետր տարածության վրա Շարժման համակարգի կետայնությունը- 16 bit Ղեկավարման հնարավորություն- DMX ARTNET Գույնի ջերմության ավտոմատացված համակարգ 550 ՎՏ, 22.6 կգ Սարքի հետ ներառված է համապատասխան կախիչներ, անվտանգության ճուպան, տեղափոխման համար նախատեսված արկղ (flight case), լուսային սարքին համապատասխանող անձնագիր: 2 տարվա երաշխիք տեղում + հետերաշխիքային սպասարկում և առանձին մասերի տրամադրում	հատ	24	Ք. Երևան Ծիծեռնակաբերդի զբոսայգի 1	01.12.2020
5	Լուսավորման համակարգեր - <b>HYBRID տեսակի</b>	Լուսային սարքավորում- HYBRID տեսակի FINE 440 BSW <i>FINE ART</i> Լամպի տեսակ- 20 R Լուսային բացվածք- 0.3-2.5 աստիճան Beam Mode Լուսային բացվածք- 4-50 աստիճան Spot Mode Լուսատվություն – 500000 LUX 5 մետր տարածության վրա Շարժման համակարգի կետայնությունը- 16 bit Ղեկավարման հնարավորություն- DMX Art Net Գույների երեք շրջանակ, CTO 3200 K, 2500K, MINUS-Green, UV ֆիլտրերով, CMY գունային համակարգ, Պատկերներով շրջանայների քանակ՝ 2: Անիմացիոն պատկերի շրջանակ պտտման հնարավորությամբ: Լուսի կափույրի բացվածքի կետայնությունը- 16 bit Լուսի բացվածքի և ֆոկուսային տարածության համաչափ կետային փոփոխության հնարավորություն:	հատ	24	Ք. Երևան Ծիծեռնակաբերդի զբոսայգի 1	01.12.2020

		700 Վտջ, 33 կգ Սարքի հետ ներառված է համապատասխան կախիչներ, անվտանգության ճոպան, տեղափոխման համար նախատեսված արկղ (flight case), լուսային սարքին համապատասխանող անձնագիր: 2 տարվա երաշխիք տեղում + հետերաշխիքային սպասարկում և առանձին մասերի տրամադրում:				
6	Լուսավորման համակարգեր - <b>LED wash B-EYE տեսակի</b>	<b>Լուսային սարքավորում- LED WASH տեսակի Fine Art 6012 PIXIE-</b> Լամպի տեսակ- 12*60 W RGBW Osram LED Լուսային բացվածք- 5-50 աստիճան Լուսատվություն -20000 LUX 5 մետր տարածության վրա Շարժման համակարգի կետայնությունը- 16 bit Ղեկավարման հնարավորություն- DMX ARTNET Գույնի ջերմության ավտոմատացված համակարգ Լուսային կետերի առանձին ղեկավարման հնարավորություն (PIXEL MAPPING) Կետային լույսերի ճառագայթված ցրման և պտտման հնարավորություն (Flower Effect), 900 Վտ, 19.50 կգ Սարքի հետ ներառված է համապատասխան կախիչներ, անվտանգության ճոպան, տեղափոխման համար նախատեսված արկղ (flight case), լուսային սարքին համապատասխանող անձնագիր: 2 տարվա երաշխիք տեղում + հետերաշխիքային սպասարկում և առանձին մասերի տրամադրում	հատ	24	Ք. Երևան Ծիծեռնակաբերդի զբոսայգի 1	01.12.2020
7	Լուսավորման համակարգեր - <b>LED strip-Bar տեսակի</b>	<b>Լուսային սարքավորում- LED strip-Bar տեսակի</b> րժման մեկ առանցքով գծային լույս անկյան բացվածքի հնարավորությամբ Լամպի տեսակ: Ոչ պակաս 8*15W RGBW Osram LED կամ լուսատվությամբ համարժեք այլ կոնֆիգուրացիա Լուսային բացվածք – 5-50 աստիճան (առնվազն թռիչք) Լուսատվություն – Ոչ պակաս 5000 LUX 5 մետր տարածության վրա Շարժման համակարգի կետայնությունը – 16bit Ղեկավարման հնարավորություն – DMX, ArtNet Լուսային կետերի առանձին ղեկավարման հնարավորություն (PIXEL MAPPING) Սարքի հետ պետք է ներառված լինեն համապատասխան կախիչներ, անվտանգության մալուխ, տեղափոխման համար նախատեսված արկղ (flight case), լուսային սարքին համապատասխանող անձնագիր 2 տարվա երաշխիք տեղում + հետերաշխիքային սպասարկում և առանձին մասերի տրամադրում	հատ	24	Ք. Երևան Ծիծեռնակաբերդի զբոսայգի 1	01.12.2020
8	Լուսավորման համակարգեր - <b>LED Par տեսակի</b>	<b>Լուսային սարքավորում- LED Par տեսակի - (24 հատ)</b> Լամպի տեսակ: Ոչ պակաս 4*40W RGBW Osram LED կամ 18*10w կամ լուսատվությամբ համարժեք այլ կոնֆիգուրացիա Լուսային բացվածք – 4-60 աստիճան (կամ ստատիկ բացվածք 45 աստիճան և ավելի) Լուսատվություն – Ոչ պակաս 5000 LUX 5 մետր տարածության վրա Շարժման համակարգի կետայնությունը – 16bit  Ինտեսիվության հավասարաչափ գծային համակարգ – 16bit Հովացման համակարգը - ռադիատորով՝ անձայն, կամ ցածրաձայն «ВЕНТИЛЯТОР»-ով Ղեկավարման հնարավորություն – DMX Լուսային կետերի առանձին ղեկավարման հնարավորություն (PIXEL MAPPING) - ցանկալի Սարքի հետ պետք է ներառված լինեն համապատասխան կախիչներ, անվտանգության	հատ	24	Ք. Երևան Ծիծեռնակաբերդի զբոսայգի 1	01.12.2020



		մալուխ, տեղափոխման համար նախատեսված արկղ (flight case), լուսային սարքին համապատասխանող անձնագիր 2 տարվա երաշխիք տեղում + հետերաշխիքային սպասարկում և առանձին մասերի տրամադրում				
9	Լուսավորման համակարգեր - <b>LED Beam տեսակի</b>	<b>LED Beam տեսակի</b> 150 included cables and Eight-pack Top loader Cases, Robin The best things come in small packages, now with zoom included. LEDBeam 150 is the answer with fast sweeping beams and a wide far-reaching quality wash in compact housing. Attractive colorful chases and smooth transitions are powered by a cluster of high power multichip 40W RGBW LEDs. The spectacular zoom range of 3.8° to 60° uses an eminent custom-designed optical system. A highly optimized motorised control produces speedy pan and tilt movement. Besides intense strobing capabilities, both LEDBeam 150 and LEDBeam 150 FW also offer gentle 18-bit dimming, including Tungsten lamp effects. Simplified control via pre-programmed colors on a virtual color wheel and various strobing and pulsing effects allows quick and easy programming.  2 տարվա երաշխիք տեղում + հետերաշխիքային սպասարկում և առանձին մասերի տրամադրում	հատ	24	Ք. Երևան Ծիծեռնակաբերդի զբոսայգի 1	01.12.2020
10	Լամպերի և լուսավորման սարքերի մասեր - <b>Մալուխ (DMX 3pin 100m)</b>	<b>FINE ART Մալուխ (DMX 3pin 100m)</b> - (10 փաթույթ – 1000 մետր)  DMX լուսային ղեկավարման մալուխ Փաթույթի երկարություն՝ 100 մ Մալուխի տեսակ՝ 1x 2x 0.34 + մեկուսիչ Դիմադրության չափորոշիչ՝ 110 Ohm AES / EBU Ծածկույթ՝ PVC Գույն՝ սև Արտադրությունը՝ "Cordial", "Stairville" կամ Եվրոպական այլ համարժեքները	Հատ(փաթույթ)	10	Ք. Երևան Ծիծեռնակաբերդի զբոսայգի 1	01.12.2020
11	Լամպերի և լուսավորման սարքերի մասեր -	<b>DMX միակցիչ (3 pin male - NC3 MXX-B)</b> NC3 MXX-B 3 pole XLR male cable connector with black metal housing and gold contacts	հատ	100	Ք. Երևան Ծիծեռնակաբերդի զբոսայգի 1	01.12.2020
12	Լամպերի և լուսավորման սարքերի մասեր -	<b>DMX միակցիչ</b>  <b>(3 pin female - NC3 FXX-B)</b> NC3 MXX-B 3 pole XLR female cable connector with black metal housing and gold contacts	հատ	100	Ք. Երևան Ծիծեռնակաբերդի զբոսայգի 1	01.12.2020
13	Լամպերի և լուսավորման սարքերի մասեր -	<b>DMX միակցիչ (5 pin male - NC5 MXX-B)</b>  <b>Neutrik NC5MXX-B</b> XLR male cable connector black shell gold plated contacts.	հատ	100	Ք. Երևան Ծիծեռնակաբերդի զբոսայգի 1	01.12.2020
14	Լամպերի և լուսավորման սարքերի մասեր -	<b>DMX միակցիչ (5 pin female - NC5 FXX-B)</b> NC5FXXB 5 pole XLR female cable connector with black metal housing and gold contacts	հատ	100	Ք. Երևան Ծիծեռնակաբերդի զբոսայգի 1	01.12.2020
15	Ղեկավարման վահանակ	<b>Features. Real-time control for up to 250 000 parameters per session in connection with grand MA3 processing Units. 6 DMX outputs, 1 DMX input. 3 internal foldable monitor multi-touch screens, 3 internal letterbox multi-touche screens. 2 internal multi-touche command screens. 2 external multi-touch screens connected. 2 multipurpose level wheels. 2 multipurpose single encoder. 71 rotary RGB backlit encoder. 5 backlit dual encoder. 30 backlit motorized 60 mm faders.</b>	հատ	1	Ք. Երևան Ծիծեռնակաբերդի զբոսայգի 1	01.12.2020

	<p>120 separat playbacks, 16 assignable x-keys. Integrated keyboard drawer. Built-in uninterruptible power supply (UPS). 3 etherCON connectors, 6 USB connectors. 2 backlit motorized A/B faders 100 mm. individually backlit and dimmable silent(clickless)keys  Parameters 12.288 (HTP/LTP)  Parameters Mode2 8.192 (HTO/LTP)  Operating voltage/Supply voltage 100-240V, 50/60 Hz  Power max. 300VA  Operating Temperature 0° C up to 40° C/32° F up to 104° F  Dimensions 1256*539*181 mm / 50 * 22*8 in  (width*depth*height, folded and drawer closed)  1256*584*409 (max.450)mm/50*23*17 (max 18) in  (width*depth*height, folded and drawer closed)  1256*871*255/50*35*10 in  (width*depth*height, maximally unfolded and drawer opened)  Net weight 44 kg/ 98 lbs  Connectors 1* powerCON TRUE 1  3 x etherCON/RJ45  6 x DMX512-A Out (5pin XLR female)  1 x DMX512-A In (5pin XLR male)  1 x MIDI In (5pin DIN female)  1 x MIDI Out (5pin DIN female)  1 x Linear Timecode In (3pin XLR female)  1 x Audio In (3pin XLR female)  1 x GPI General Purpose Interface (D-SUB DE9 female) for remote control  2 x DisplayPort 1.2 for external screens  2 x S/PDIF In and Out  3 x USB 2.0 (type A)  3 x USB 3.0 (type A)  2 x LED desk light (4pin XLR female)  4011150 MA Case grand MA3 full size, with wheels (by Amptown)   48 kg/106lbs,  1350*715*330/mm/54*29*13 in (width*depth*height, measured without wheels)  1350*845*330/mm/54*34*13 in (width*depth*height, measured with wheels)  4011386  <b>MA Magnetic plate for easy labeling of 15 faders, for grandMA3</b>  MA Magnetfolie zur Beschriftung von 15 fadern für grandMA3  <b>4010517 grandMA3 8 Port Node</b>  1xPower Con True1 connector (NAC3FX-W), None 100-240V, 50/60Hz, 15VA, 0C up to 40C/32F to 104 F  <b>482x189x43mm/19x8x2xin</b>  width*depth*height, 2kg/5lbs, 1xpower CON TRUE  1xetherCON/RJ45  8xDMX512-A OUT(5pin XLR female)  1xUSB 2.0(type A)  <b>4010516 grandMA3 4port Node</b>  None, 100-240V, 50/60HZ, max. 15VA, 0C up to 40C/32F to 104 F,  207x184x43mm/9x8x2in  width*depth*height, 2 kg/5lbs, 1xpower CON TRUE1  1xetherCON/RJ45  8xDMX512-A OUT(5pin XLR female)  <b>130600 MA Network Switch</b>  Operating voltage/Supply voltage, 100-240 V, 50/60HZ, automatic detection,  Max. 100 VA, 483x233x43mm/19x9.17x1.69 in (widthxdepthxheight), 3.5kg/7.7lbs, 9x ether CON  4xprepared SFP Cages for Mini-GBIC, 1xpower CON 1x USB(type)</p> <p>պաշտոնական ներկայացուցիչը Հայաստանում</p>						
5. Երաժշտական գործիք							





1	Երաժշտական գործիք.	Ռոյալ «Steinway and Sons» D-274	Հատ	1	Ք. Երևան Շիժենակաբերդի զբոսայգի 1	01.12.2020
---	--------------------	---------------------------------	-----	---	---	------------

Նվիրատու՝

  
  
 Ս. Ղուշյան

Նվիրառու՝

  
  
 Կ. Ղազարյան

**Հավելված N 2**

Կարեն Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիրի կարողությունների զարգացման դրամաշնորհի 2020թ.-ի մարտի 05 -ի թիվ 422-ՉՂՇՈՁ պայմանագրի

**Նվիրատու՝**  
Պետական գույքի կառավարման կոմիտե,  
ՀՎՀՀ՝ 02528489,  
հասցե՝ ք. Երևան, Տիգրան Մեծի 4  
ՀՀ ֆինանսների նախարարության  
աշխատակազմի գործառնական վարչություն  
h/h 900011033561

**Նվիրառու՝**  
«Կարեն Դեմիրճյանի անվան  
մարզահամերգային համալիր» ՊՈԱԿ,  
ՀՎՀՀ 00144572, հասցե՝ ք. Երևան,  
Ծիծեռնակաբերդի զբոսայգի 1  
ՀՀ ֆինանսների նախարարության  
աշխատակազմի գործառնական վարչություն  
h/h 900018002825

**ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ**

**Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն N**

«\_\_\_» \_\_\_\_\_ 2020թ.

Պայմանագրի անվանումը՝ «Կարեն Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիրի» Միջոցառման աշխատանքների իրականացման դրամաշնորհի» պայմանագիր:

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ \_\_\_\_\_ .2020թ.

Պայմանագրի համարը՝ \_\_\_\_\_

Նվիրատուն, ի դեմս Պետական գույքի կառավարման կոմիտեի գլխավոր քարտուղարի պարտականությունները կատարող Մելանյա Ղուշյանի, և Նվիրառուն, ի դեմս «Կարեն Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիր» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Կարեն Ղազարյանի, կազմեցին սույն արձանագրությունն այն մասին, որ \_\_\_\_ .ի. 2020 թ-ից մինչև \_\_\_\_ .2020 թ ժամանակահատվածում Նվիրառուն իրականացրել է վերը նշված պայմանագրով նախատեսված՝ ստորև թվարկած Միջոցառումները՝ պայմանագրով սահմանված ժամանակացույցում նշված ժամկետներում, իսկ դրանց արդյունքները համապատասխանում են պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրին.

Միջոցառման համար կատարված ծախսի նկարագիրը	Միջոցառման համար կատարված ծախսի քանակական ցուցանիշները	Միջոցառման համար կատարված ծախսի ժամկետները
Ընդամենը	.....	.....

**Նվիրատու՝**

**Նվիրառու՝**

\_\_\_\_\_ Մ. Ղուշյան

\_\_\_\_\_ Կ. Ղազարյան

Կ. Տ.

Կ. Տ.



**Հավելված N 3**

Կարեն Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիրի կարողությունների զարգացման դրամաշնորհի 2020թ.-ի մարտի 05 -ի թիվ 422-ՉԴ-2020 պայմանագրի

**ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ**



/հազ.դրամ/

N	Միջոցառման անվանումը	Նվիրատուին վճարման ենթակա գումարները			
		Լ եռ.	Լ կիսամյակ	9 ամիս	Տարի
1	Կարեն Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիրի կարողությունների զարգացում	718 489.3	718 489.3	718 489.3	718 489.3

Նվիրատու՝

  
  
 Մ. Ղուշյան

Նվիրատու՝

  
  
 Կ. Ղազարյան